



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/111/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

14 ապրիլի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Արմեն Մարուխյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի ապրիլի 14-ին քննելով ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության քննիչ Դավիթ Գևորգի Հակոբյանի կողմից ներկայացված պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի վերաբերյալ թիվ ՎԻՎ/111/2025 վարչական գործը

ՊԱՐԶԵՑ

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, նույն օրենքի 26.1-րդ և

26.2-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության քննիչ Դավիթ Գևորգի Հակոբյանի վերաբերյալ իրականացված բարեվարքության ուսումնասիրության շրջանակում, ուսումնասիրել է վերջինիս գույքային դրությունը, ինչպես նաև՝ նախկինում ներկայացված հայտարարագրերը: Ուսումնասիրության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրականացվել է հայտարարագրերի վերլուծություն և ստուգում, որի արդյունքում պարզվել է հետևյալը՝

1) Պետական ռեգիստրից ստացված տվյալների համաձայն՝ Դավիթ Հակոբյանի մայրը՝ Մարինե Սարգսյանը, 2011 թվականի ապրիլի 30-ից հանդիսանում է «ԵԼԴԱՎ-ՀԱՎՈԲՅԱՆ» ՍՊԸ-ի 100% բաժնետեր, մինչդեռ բաժնեմասնակցության վերաբերյալ այդ տվյալը ներկայացված չէ Դավիթ Հակոբյանի Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում:

2) Կենտրոնական բանկից ստացված տվյալների համաձայն՝ Դավիթ Հակոբյանի բանկային հաշվի մնացորդը 2023 թվականի տարեսկզբին կազմել է 1,367,356 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին՝ 2,402,066 ՀՀ դրամ, մինչդեռ Դավիթ Հակոբյանի Հայտարարագրի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)» բաժնում բանկային հաշվի մնացորդ հայտարարագրված չէ:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալների հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի ապրիլի 2-ին Դավիթ Հակոբյանին հասցեագրել է թիվ 01/1334-2025 գրությունը՝ խնդրելով գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը, ժամը՝ 16:00-ին անձամբ կամ ներկայացուցչի միջոցով ներկայանալ Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար, իսկ 5-րդ աշխատանքային օրը, ժամը 15:00-ին՝ գործի քննությանը մասնակցելու նպատակով: Նշված գրությունը Դավիթ Հակոբյանը

ստացել է 2025 թվականի ապրիլի 7-ին (հիմք՝ Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված գրություն):

1.3 2025 թվականի ապրիլի 10-ին պատշաճ ծանուցված Դավիթ Հակոբյանի բացակայությամբ, կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/54/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Դավիթ Հակոբյանի բացակայությամբ 2025 թվականի ապրիլի 14-ին, ժամը՝ 15:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումը ու պարզաբանումները

Վարույթի մասնակից Դավիթ Հակոբյանը Հանձնաժողով է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը. «(...) Ձեր կողմից նշված իմ մոր՝ Մարինե Սարգսյանի կողմից 2011 թվականի ապրիլի 30-ից «ԵԼԴԱՎ-ՀԱԿՈԲՅԱՆ» ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնետեր լինելու հանգամանքը հայտարարագրում չնշելը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ ես այդ մասին տեղյակ չեմ եղել և չէի կարող լինել հետևյալ պատճառաբանությամբ՝ վերոնշյալ ընկերությունը ստեղծվել է 2011 թվականին, որից հետո 2019 թվականի հունիսի 20-ից առ այսօր դրա գործունեությունը դադարեցված է և քանի որ դրա գործունեությունը իմ կողմից հայտարարագիր լրացնելու պահին արդեն իսկ բավականին երկար ժամանակ դադարեցված է եղել, ապա ես այդ մասին տեղյակ չեմ եղել:

Կից ներկայացնում եմ նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված վերոնշյալ ընկերության գործունեության դադարեցման վերաբերյալ տեղեկանքը:

Ձեր կողմից նշված իմ 2023 թվականի տարեկան հայտարարագրում բանկային հաշվի մնացորդ չհայտարարագրելը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ ես ունեցել և ունեմ միայն մեկ բանկային հաշիվ, որին եղել են միայն իմ «քննչական

կոմիտեից օրինական կարգով ստացված եկամուտները, այսինքն իմ հաշվեհամարին կամ հաշվին եղել են միայն իմ օրինական եկամուտների մնացորդները, այլ եկամուտներ չեմ ունեցել և քանի որ ես հայտարարագրում առկա ստացված եկամուտներ դաշտում լրացրել եմ իմ ստացած եկամուտները, այդ պատճառով դրանք առանձին դաշտով չեմ լրացրել, քանի որ ես գիտեցել եմ, թե բանկային հաշվի մնացորդներ դաշտում պետք է լրացնել այլ եկամուտների մնացորդները, որոնք ես չեմ ունեցել, այսինքն բանկային հաշվի մնացորդ չհայտարարագրելը պայմանավորված է եղել՝ հայտարարագրի լրացման կարգի մասին սխալ տեղեկություն ունենալով: (...)»:

III Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/111/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության քննիչ Դավիթ Գևորգի Հակոբյանը հանդիսանում է գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.2 Պետական ռեգիստրից ստացված տվյալների համաձայն՝ Դավիթ Հակոբյանի մայրը՝ Մարինե Սարգսյանը, 2011 թվականի ապրիլի 30-ից հանդիսանում է «ԵԼԴԱՎ-ՀԱԿՈԲՅԱՆ» ՍՊԸ-ի 100% բաժնետեր, մինչդեռ բաժնեմասնակցության վերաբերյալ այդ տվյալը ներկայացված չէ Դավիթ Հակոբյանի Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում:

3.3 Պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.04.2025 թվականին տրված թիվ 377 տեղեկանքի համաձայն՝ «ԵԼԴԱՎ-ՀԱԿՈԲՅԱՆ» ՍՊ ընկերության գործունեությունը 20.06.2019 թվականից ժամանակավորապես դադարեցված է:

3.4 Կենտրոնական բանկից ստացված տվյալների համաձայն՝ Դավիթ Հակոբյանի բանկային հաշվի մնացորդը 2023 թվականի տարեսկզբին կազմել է 1,367,356 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին՝ 2,402,066 ՀՀ դրամ, մինչդեռ Դավիթ Հակոբյանի Հայտարարագրի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)» բաժնում բանկային հաշվի մնացորդ հայտարարագրված չէ:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք են պետական(...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա):

Նույն հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գույքը հայտարարագրելիս նշվում են դրամական միջոցի դեպքում՝ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը, արժույթը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առկա բանկային հաշիվների դեպքում՝ նաև հաստատության անվանումը և գտնվելու վայրը:

4.3 Օրենքի 42-րդ հոդվածի (Շահերի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի համաձայն՝ հայտարարագրի՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն կամ որի իրական շահառու են հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) չափը, մասնակցությունը ձեռք բերելու կամ իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին, կամ որի

կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն:

4.4 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անգգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.8 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց

ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.9 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.10 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում

փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող **հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:**

Սույն գործով ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության քննիչ Դավիթ Գևորգի Հակոբյանը Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանդիսանալով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ, թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք՝ Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ, այն է.

1) Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում չի հայտարարագրել մորը՝ Մարինե Սարգսյանին 2011 թվականի ապրիլի 30-ից պատկանող «ԵԼԴԱՎ-ՀԱԿՈԲՅԱՆ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի վերաբերյալ տվյալը, որով խախտել է Օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:

2) Հայտարարագրի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)» բաժնում բանկային հաշվի մնացորդ չի հայտարարագրել, մինչդեռ Կենտրոնական բանկից ստացված տվյալների համաձայն՝ Դավիթ Հակոբյանի բանկային հաշվի մնացորդը 2023 թվականի տարեսկզբին

կազմել է 1,367,356 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին՝ 2,402,066 ՀՀ դրամ, որով խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը:

1-ին կետում նշված խախտման կապակցությամբ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովը իր կողմից կայացված նախորդ որոշումներով շահերի հայտարարագրում ոչ ամբողջական տվյալների հայտարարագրման հետ կապված՝ նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքերը, երբ պաշտոնատար անձի հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում հայտարարատուի ընտանիքի կազմի մեջ մտնող անձի մասնակցությունն առևտրային կազմակերպությունում չի ներկայացվել, սակայն գործում առկա փաստերի համաձայն (Պետական կոմիտեից ստացված տվյալներ) հաստատվել է, որ առևտրային կազմակերպության գործունեությունը ժամանակավոր դադարեցված է (ՎԻՎ 05/22, ՎԻՎ 22/22):

Տվյալ դեպքում Հանձնաժողովն արձանագրում է, որ Դավիթ Հակոբյանն իր գրավոր պարզաբանմամբ հայտնել է, որ իր մոր՝ Մարինե Սարգսյանի «ԵԼԴԱՎ-ՀԱԿՈԲՅԱՆ» ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնետեր լինելու մասին տվյալը հայտարարագրում չնշելը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ ինքն այդ մասին տեղյակ չի եղել և չէր էլ կարող տեղյակ լինել, քանի որ այդ ընկերության գործունեությունը 2019 թվականի հունիսի 20-ից առ այսօր դադարեցված է: Նշված հանգամանքը հաստատվել է Պետական եկամուտների կոմիտեի կողմից 2025 թվականի ապրիլի 4-ին տրված թիվ 377 տեղեկանքով՝ համաձայն որի 2019 թվականի հունիսի 20-ից «ԵԼԴԱՎ-ՀԱԿՈԲՅԱՆ» ՍՊ ընկերության գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության քննիչ Դավիթ Հակոբյանի կողմից կատարված խախտման արդյունքում նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել, և այն հանրային վտանգավորության տեսակետից ունի նվազ նշանակություն:

Անդրադառնալով 2-րդ կետում նշված խախտմանը Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի նպատակն է ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Սույն գործով ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության քննիչ Դավիթ Հակոբյանը Հայտարարագրում անզգուշաբար ներկայացրել է սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ, այն է.

Հայտարարագրի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)» բաժնում Դավիթ Հակոբյանն իր բանկային հաշվին առկա

մնացորդները, որոնք 2023 թվականի տարեսկզբին կազմել է 1,367,356 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին՝ 2,402,066 ՀՀ դրամ, չի հայտարարագրել, մինչդեռ Օրենքի 40-րդ հոդվածի 7-ին մասի համաձայն՝ այդ տվյալները պարտադիր ենթակա են հայտարարագրման:

Սույն մասով Հանձնաժողովը արձանագրում է, որ Դավիթ Հակոբյանի կողմից Հայտարարագրում իր բանկային հաշվին առկա դրամական միջոցների վերաբերյալ տվյալները չհայտարարագրելու պայմաններում հնարավոր չէ ամբողջական պատկերացում կազմել վերջինիս՝ որպես հայտարարատու պաշտոնատար անձի գույքային դրույթյան մասին, ինչը վտանգում է Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով պահպանվող հասարական շահը:

Տվյալ պարագայում, Հանձնաժողովը կարևոր է համարում այն, որ Դավիթ Հակոբյանի կողմից չհայտարարագրված դրամական միջոցների չափը գերազանցում է վերջինիս դրույքաչափի համար սահմանված աշխատավարձի զուտ չափը, որն ըստ Հայտարարագրում ներկայացված տվյալների կազմում է ամսական մոտավորապես 646,000 ՀՀ դրամ, քանի որ Հանձնաժողովն իր կողմից կայացված նախորդ որոշումներով բանկային հաշվին առկա մնացորդների չհայտարարագրման հետ կապված նվազ նշանակություն է գնահատել միայն այն դեպքերը, երբ չհայտարարագրված ընդհանուր գումարի չափը չի գերազանցել հայտարարատու անձի դրույքաչափի համար սահմանված աշխատավարձի զուտ չափը (տես՝ 2021 թվականի մայիսի 4-ի ՎԻՎ/08/2021 և 2021 թվականի մայիսի 19-ի ՎԻՎ/09/2021 գործերը):

Անդրադառնալով նշված խախտման առնչությամբ Դավիթ Հակոբյանի կողմից ներկայացված գրավոր պարզաբանմանը՝ համաձայն որի 2023 թվականի տարեկան հայտարարագրում բանկային հաշվի մնացորդ չհայտարարագրելը պայմանավորված է այն հանգամանքով, որ ունեցել է և ունի միայն մեկ բանկային հաշիվ, որին եղել են միայն իր քննչական կոմիտեից օրինական կարգով ստացված եկամուտները և քանի որ Հայտարարագրում առկա ստացված եկամուտներ դաշտում լրացրել է իր ստացած

եկամուտները, այդ պատճառով դրանք առանձին դաշտով չի լրացրել, Հանձնաժողովը արձանագրում է, որ Օրենքի համաձայն՝ բանկային հաշվի մնացորդները պարտադիր լրացման ենթակա տվյալներ են, և անկախ դրանց ծագման աղբյուրից, բանկային հաշվին տարեսկզբին և տարեվերջին առկա դրամական միջոցներն ենթակա են առանձին հայտարարագրման:

Հաշվի առնելով այն, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի է առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, ինչպես նաև առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դավիթ Գևորգի Հակոբյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200 000 ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը:**

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դավիթ Գևորգի Հակոբյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Դավիթ Գևորգի Հակոբյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ